

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Գործող 8 ՄԶԺ.
Պատահայ 10 ՄԶԺ.
Վերջինս Գ. Պորոյ 4 ՄԶԺ.
Պատահայ 5 ՄԶԺ.
Դանդաղան տողը մէկ անգամի չափ
մար 3 դուրով, երկու անգամի չափ
մար 2 դուրով, աւելի անգամներու
չափար զատ սակարկութիւն կըլ-
այ :



ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 13 ՅՈՒՆԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Հայտնութեան դաշնագիրն ամբողջ մեր աչքին առջեւ է, և մասն մասն կ'սկսինք թարգմանել: Բայց նախ հարկ կը համարինք Եւրոպական լրագրաց խորհրդածութիւններն յառաջ բերել:

Տէյլը—Նիւզ ազատական թերթն այսպէս կը գտնէ նոր դաշնագրութիւնը.

“Նոր դաշնագրութեան մէկ արժէքն այս կը համարուի որ ինքնաթիւ է քոյրովարին կնքած գործին պարտաւի կողմերը կը բառնայ: Այս կարծիքը չկրնար ստոյգ ըլլալ: Պէտք լինի դաշնագրութիւնը Ռուսիոյ պահանջմանց ամենէն ծանր կէտը, որ է Պետարպոլի վերագարձը, կընդունի, և Հելլենաց շահույց նկատմամբ եղած անհոգութեան դարման տանելու բան մը չընեն, որոյ համար Հելլենքը իրաւունք կը գտնեալտին: Պալլաքաններուն հիւսիսային կողմը Պուլղարիա մը կը հաստատէ, որ ինքն ինքն քայլեր բաւական ուժ չունի, և իւր մանկութեան ժամանակ օտար տէրութեան մը յետն կարծու է: Պալլաքանայ հարստային կողմն աննշան դաւ առ մը կը կազմուի, որ օտար խնդիրներու թատր պիտի ըլլայ: Համառօտութիւն խոսելով, դաշնագրութիւնը անօգուտ կերպով կը շատցնէ Ռուսիոյ ազդեցութեան միջոցները: Դուռն համոզուած չերկիր թէ նոր դաշնագրութիւնն իրեն համար մեծ շահ մը կը պարունակէ: Այս թէքտնախորհրդագրութեամբ Սուլթանին կառավարութեան ձեռքը թողուած երկու գաւառաց (Պոսնա և Հէրսէք) գրաւումն օգտակար միջոց մը համարողներն իրենց կարծիքն հաստատելու համար առաւել փաստաբանութեան պէտք ունին: Աւստրիա Բ. Դըրան ժառանգ ըլլալ ուղղորդներուն կարգին մէջ մանկելով, Ռուսիոյ և իրեն մէջ մրցում մը պիտի ծագի թէ արդեօք ո՞րն աւելի աւար պիտի առնու: Բայց Օսմանեան կառավարութիւնն այս խնդրոյ վրայ իրեն առաջարկուած կերպով չայլը: Արեւելեան թուրք մէլիքն և Պուլղարայէն դուրս մնացած դաւաճող վերաբերեալ յոգւածները բացող չեն, և հետաքրքրութեան արժանի հակապատկեր մը կը ձևացնեն Աւստրիոյ և Ռուսիոյ տրուած մեծամեծ իրաւանց առջեւ: Հոս դաշնագրութեան հիմնական թերութիւնը կը տեսնուի: Մեծ տէրութիւնը իրենց շահերուն նայած են: Անոնք որ Տէրութեանց խորհրդոյ մէջ ներկայացուցիչ կամ բարեկամ չունէին, և անոնք որ տկար են, բարձի թողի եղած են: Մեծ տէրութեան

թիւններն հաստատուն իրաւունք և քառակուսի մղոններով հող կ'ստանան, իսկ վերջիններն ստուերական խոստումներով կը ճանրուին: Անգղիացիք Պէրլինի դաշնագրութիւնը թուրքիոյ հետ կնքուած գաղտնի պայմանագրութեան լուսով պիտի կարդան, և պիտի նշանակեն թէ դաշնագրութեան հրատարակեալ պատճէնն Ռուսական թուրքիոյ բարենորոգմանց մասին լուս է: Այդ կարևոր բարենորոգումները գործադրելու ջանքը գլխաւորապէս Անգղիոյ պիտի լինայ: Լորտ Սայնսպըրի առ Սըր Օսթլէն Լէյարտ ուղղած ծանուցագրին մէջ կըսէր թէ Անգղիա չկրնար յուսի կառավարութիւնն ու հարստահարութիւնը վաւերացնել իւր պաշտպանած երկիրներուն մէջ: Անգղիոյ ուսին վրայ պիտի մնայ տան և վեց միլիոն ժողովուրդեան մ'երջանկութեան ծանր բեռն, որուն պէտք էր միւս տէրութիւնը ևս մասնակցէին: Պիսմարը իշխանին այն խօսքը թէ “Տէրութեանց խորհուրդն Եւրոպիոյ գործերէն արժանի է”, ժխտելու հարկ չենք տեսներ, բայց դաշնագրութեան իբրեւ գաղտնի յաւելումն եղող պայմանագրութեան վրայ ակնարկ մը ձգելով, Անգղիոյ երեսփոխանաց թիւնն սրտով ընդունած պատասխանատուութեանց բեռնն վրայ ամենամեծ երկիւղներ կ'զգանք:

Թայմը լրագրին յուսադիր կերպով կը գտնէ Տէրութեանց խորհրդոյ դուրծը.

“Գերմանիոյ գահաժառանգ իշխանը Տէրութեանց խորհրդոյն ամեն նէն աւելի պատու բերող բանը համարեցաւ խաղաղութեան պահպանութիւնը: Գահութեամբ կրնանք նկատել որ ասոր հասնելու միջոցներուն և անոնց վախճանին վրայ Պէրլինի Տէրութեանց խորհրդոյն ներկայացած ծանր խնդրոց առանց պատերազմի լուծումն հայտնութեան դատին յայտնի յաղթութիւն մ'է ներկային ու ապագային մէջ, և կը հաստատէ թէ՛ որչափ և ասոր հակառակ շատ իրողութիւններ ըլլան, հասարակային բարոյականութիւնն յառաջդիմել սկսած է: Տէրութեանց խորհուրդը գումարուած ժամանակ հորիզոնը խիստ մութ էր, սակայն հիմայ խիստ պայծառ է: Պէրլինի դաշնագրութիւնը նախկին դաշնագրութեանց վրայ յառաջդիմութիւն մ'է, իրեն կարգադրած երկիրներն իբրեւ անդաւայ զանգուածներ համարուած չեն, որը կրնան ըստ ընդհանուր պատեհութեան արամադրել, բայց յեղափոխ կապակցութիւնը ի հաշիւ առնուեցան իրենց բոլոր յայտերով և բաղձանք: Պէրլինի դաշնագրութեան նշանակած սահմաններուն մէջ յառաջդիմութեան ասպարէզ թողուած է: Դաշնագրութեան

րութեան պայմանները կրնան փոփոխուիլ, եթէ պէտք ըլլայ, առանց բռնու խզման: Իրաց ընթացքին վրայ չափազանց վստահութիւն կամ յոյս չենք դնել: Նոր ազդեցութիւնները գրեթէ իրենց փորձը կընեն, և տակաւին պէտք է ապացուցանեն թէ իրենք արժանի են Եւրոպայի իրենց ցուցած խնամոց: Պէտք է յիշենք որ քոսներկու տարի յառաջ Արեւելեան խնդիրը նուազ գոհացուցիչ կերպով լուծող դաշնագրութիւն մը կնքուեցաւ: Եթէ 1836ի դաշնագրութիւններն այսչափ երկար ժամանակ տեւեցին, փառահեղ որ 1878ի կարգադրութիւններն ևս նոյնչափ կրնան ապրել: Այս պարագայիս մէջ Արեւելեան խնդիրը, լուծեալ կամ ոչ, ներկայ դարս ապահովապէս պիտի անցունէ: Եթէ մերձակայ դարը գոհ չըլլայ եղած կարգադրութեամբ, գործը նորէն կրնայ ձեռք առնուլ և իւր ուղած կերպով լուծել: Բայց ինչ որ արդէն վստակուած է՝ չկրնար ետ անհետիլ: Ռուսիոյ յառաջիկա զացութիւնն իբրեւ վտանգ մ'զգալի եղած է՝ ոչ միայն Անգղիոյ՝ այլ և քաղաքակրթութեան համար: Այս յառաջիկա զացութիւնն հազարէն սառույցի բլրոյ մը մեծնալուն կը նմանի, որ յամրապէս կաճի, անդիմադրելի է, և իւր տարածումը տեղիքէն ամեն կեանք կը բառնայ: Մեծ գոհութեան արժանի է որ առ այժմ գոնէ այս վտանգէն ազատ ենք: Եթէ վրտանգը վերջնական կերպով չկրնայ վանիլ, առ այժմ անսահման կերպով յետաձգուած է: Մերձակայ սերունդն իրեն և իւր յաջորդաց համար պէտք է հոգ տանի: Պէրլինի դաշնագրութիւնը մէկ սերունդի մը համար բաւական գործ համարուելու է:

Դարով Լորտ Պիքսֆիլտի կարծեաց, Լորտերուն խորհրդաւորին յուլիս 18ի նստին մէջ յայտարարեց թէ Տէրութեանց խորհուրդն Այսթէֆանսի դաշնագրութիւնը փոփոխեց՝ եւրոպիոյ անկախութեան դէմ անոր պարունակած սպառնալիքը բառնալով, և Սուլթանին վերագարձներով այն հոգերուն երկու երրորդը՝ զորս Այսթէֆանսի դաշնագրութիւնը Պուլղարիոյ իշխանութեան կուտար: Պալլաքանները թուրքիոյ սահման կըլլան, զոր Բլէֆանսի պաշտպանող սերունդի մը համար դիւրին է պահպանել: Երկիրը ընդարձակելու համար Ռուսիոյ պահանջները մեծ մասամբ մերժուեցան: Տէրութեանց խորհուրդը թուրքիոյ Եւրոպական գաւառներն հոծ և միացեալ երկիր մը կընէ մայրաքաղաքին կցուած, և վեց միլիոն բնակչութեամբ: Պոսնիոյ և Հէրսէքի նըկատմամբ, Բ. Դուռն հոն բարեկարգութիւնը պահելու համար յիսուն հազար զօրք դնելու պէտք ունենէր:

Տէրութեանց խորհուրդն հրաւիրեց զԱւստրիա, որ այս երկու գաւառները գրաւէ ու կառավարէ՝ մինչև որ բարեկարգութիւնն ու խաղաղութիւնը վերադառնան հոն: Լորտ Պիքսֆիլտ հերքեց այն ամբաստանութիւնը թէ Անգղիա թուրքիոյ բաժանումն ընդունած էր, քանզի, ըսաւ, մեծ պատերազմներէ ետեւ Աւստրիա և Պալլաքիա ևս հող թողուցած էին: Անգղիա միշտ դիմադրած է թուրքիոյ բաժանման, և պետութիւն մը, որոյ վերահապաւ մայրաքաղաք մը, բանակ, նաւատորմ և բան միլիոն հպատակ ունի, չկրնար բաժանեալ համարիլ:

Թունաստանի գալով, Հելլենական բաղձանքը մինչև Գ. Պոլիս կը հասնի, սակայն Թունաստան սահմանաց ուղղութիւն մը պիտի ստանայ: Փոքր-Ասիոյ անցնելով, Լորտ Պիքսֆիլտ ըսաւ թէ Անգղիա չէր կրնար արդարանայ թէ՛ կարսի և Պաթմոսի համար պատերազմել: Պաթմոս իրօք փոքր նաւահանգիստ մ'է և ահագին պատերազմական նաւարան մ'ընդուն համար կէս դար ժամանակ և միլիոններով ստակ պէտք է: Անգղիա Հնդկաստանի սահմանագիծոց վրայ եղած պատերազմաց վերջ տալու լուաւոյն եղանակ համարել է Ռուսական թուրքիան պաշտպանել և կիպրոսը գրաւել, որոյ համար Բ. Դրան հետ պաշտպանողական դաշնագրութիւն մը կնքուած է: Կըսեն թէ Ռուս բաւական մեծ է Անգղիոյ և Ռուսիոյ համար, և այս խօսքն, ըստ Լորտ Պիքսֆիլտի, խիստ ստոյգ է:

Տէրութեանց խորհրդոյ վերջին նստին մէջ՝ արդէն Պիսմարը իշխանն յայտարարած էր թէ կը յուսայ որ ներկայ հայտնութիւնը տեւական կըլլայ: Թէ և հակառակ նշանները բաղձալիւ են, սակայն թէ լրագրաց խորհրդածութիւններն և թէ՛ պետական մարդոց յայտարարութիւններն կրնայ մակաբերել թէ Տէրութեանց խորհրդոյ գործն որչափ թերութիւններ ունենայ՝ կրնայ գոնէ բաւական տարիներ աւել, եթէ անակնկալ խուսովութիւններ չծագին: Առ այժմ տէրութեանց միջնորդութիւնը Բ. Դրան Թունաստանի դէմ ըրած պատրաստութիւնները գաղտնից, և յոյս կայ որ Հելլենական խնդիրն իրաւախոսութեամբ վերջանայ:

ՊԱՏՃԷՆ ԴԱՇՆԱԳՐԱՅԻՆ ՊԵՐԼԻՆԻ

ՅԱՆՈՒՆ ԱՍՏՈՒՄՈՑ ԱՄԵՆԱԿԱՆ Օժմանեանց վեհ: Սուլթանը, Գերմանիոյ վեհ: Կայսրը, Աւստրիոյ վեհ: Կայսրը, Գաղղիոյ Հանրապետութեան նախագահը, Անգղիոյ վեհ: Թագուհին և Հնդկաստանի կայսրուհին, Իտալիոյ վեհ: Թագուհի, Ռուսաց վեհ: Կայսրը, Վերջինս ամբողջութեամբ հիմնադրէ:

